*928. Ս. ՍԱՐԳԻՍ.* մատուռի վրա 5 տող.



Թ[ՎԻՆ] 1882 ՇԻՆԷՑԻՆՔ ԱՅՍ
ՍԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ
[ՂԱԶ]ԱՐՈՍԻ ՈՐԴԻՔ ՏԻՐԱՑՈ
[ՄԱՐ]ՏԻՐՈՍՍ ԵՒ ՍԱՐԳԻՍՍ:
[ՅԻՇԵ]ՑԷՔ Ի ՏՐ: ԱՄԷՆ:

*Ծանոթ.* Մատուռը գտնվում է գյուղի հյուսիսային կողմի գերեզմանոցում, բլրի վրա: Դա միանավ փոքր սրահ է՝ առնվազն XIII դ. հնությամբ, որը միայն նորոգվել է 1882 թ-ին: Արձանագրության կրող երեսակալ խոշոր քարը միտումնավոր հանվել-նետվել է ցած, կոտրվել է ներքին ձախ եզրը:

*929. ԽԱՉՔԱՐ.* թների տակ, 1 տող.

ԹՎ[ԻՆ] ՈԼԴ (1185):

*Ծանոթ.* Նույն գերեզմանոցում է, քարհանքից ոչ հեռու ընկած, քիվին, եղծված հիշատակագիր:

*930. ԽԱՉՔԱՐ.* Նույն տեղում՝ քարհանքից 0,5 կմ հյուսիս-արևելք, քիվին 1 տող (XII-XIII դդ.).

ՏՐ ԱԾ ՅՍ ՔՍ

ՅԴՎԱ

*931. ԽԱՉՔԱՐ.* երկու բեկոր,գյուղից 4 կմ հյուսիս, ձորի մեջ.

Ի Թ Ո . . . ԱՒՈՐՈՒԹԵ, ՊԱՐՈՆ ՍԱՐԳՍԻ ...:

*Ծանոթ.* Ընդարձակ արձանագրությունից կարդացվում է այսքանը:

## ՄԱՐՑ

Գտնվում է բարձրադիր հարթության վրա, Դսեղից հարավ-արևելք ձորի ափին: Ձորի միջով հոսում է Բաբաջանի գետակը, որը թափվում է Դեբեդի մեջ: Հնում այս ձորի շրջակայքում եղել են 24 գյուղեր, որոնցից շատերի տարածքում պահպանվում են մատուռների, հյուրատների, կամուրջի ավերակներ, հանգստարաններ, խաչքարեր: Ճարտարապետական հուշարձաններից առավել հիշարժանը Իգատակ գյուղատեղի երկու եկեղեցիներն են: Երկուսն էլ միատեսակ ուղղանկյուն խորանով միանավ սրահներ են: Ինչպես դրանցից մեկի արձանագրությունն է հավաստում, այն կառուցվել է 1255 թ.:

Արձանագրություններ ունեն նաև գերեզմանոցների խաչքարերը, ինչպես և բազմաթիվ այլ խաչքարեր՝ սփռված շրջակայքում, հատկապես «Ճգնավորի խաչ» կամ «Ճգնավորի թալա» կոչված վայրում, գյուղից 4 կմ հարավ-արևելք: Այստեղ է գտնվում նաև խաչելության պատկերով գեղաքանդակ մեծարվեստ մի խաչքար՝ իր ձևով հիասքանչ, սակավ նմուշներից մեկը:

***932. ԵԿԵՂԵՑԻ***. Մարց բնակատեղիում, արևմտյան մուտքի միակտոր ճակատակալ քարի շրջակամարին և հարթ մակերեսին, 8 տող.



Ի ԹՈՒԻՍ :ՉԴ: (1255): ԵՍ՝ ԴԱՆԻԷԼ ՔԱՀԱՆԱՅ, ՈՐԴԻ ՌԸՍՏԱԿԻՍԻ,
ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂ-
ԵՑԻՍ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ, ԻՇԽ-
ԱՆՈՒԹ[ԵԱՄ]Բ ՄԵԾ ԵՒ ԲԱՐԷՊԱՇՏ ԻՇԽԱՆ-
ԻՆ ԳՐԻԳՈՐՈՅ ԵՒ ԵՏՈՒ ՏԵՐՈՒՆԻ ՏԱՐԵ-
ՆՆ :Բ: (2) ՊԱՏԱՐԱԳ: ԱՐԴ, ԱՂԱՉԵՄ ԶՁԵԶ, ՈՐՔ ԵՐ-
ԿՐՊԱԳԵՔ ՍԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ, ՅԻՇԵՍՋԻՔ ԶԻՍ
ԵՒ ԶԱՄՈՒՍԻՆՍ ԵՒ ԶԾՆՈՂՍՆ ԵՒ ԶԵՂԲԱՐՍ

*Հրատ*. Ջալալյանց, Ա, 108:

***Ծանոթ***. Ճարտարապետ Թ. Գևորգյանի կարծիքով այս եկեղեցին վերածվել է հեթանոսական մեհյանից, որից մնում է նաև ուղղանկյուն խորանը: Եկեղեցին կիսավեր վիճակում է:

***933. ԵԿԵՂԵՑԻ***. Նախորդ արձանագրությունից ներքև, արևմտյան պատի հարավային հատվածում, մուտքից աջ, 8 տող.



[ՅԱ]ՆՈՒՆ ԱՅ
ԵՍ՝ ԶՆԴԱՇԱՀ ԵՒ
ԱՄՈՒՍԻՆ ԻՄ, ՄԻԱԲ-
ԱՆԵՑԱՅ ԵԿԵՂԵ[Ց]ՈՅՍ
ԵՒ ԵՏՈՒՆ ԻՆՁ ՊԱՏԱ-
ՐԱԳ ՏԱՐԵՆ :Ա: (1) ԱՒՐ Զ-
ԱՏԿԻՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ
ԴԱՏԻ Ի ՏՆԷ:

***934. ԽԱՉՔԱՐ***. եկեղեցու ներսում, արևելյան պատուհանի հյուսիսային կողմում, պատի մեջ ագուցված, 2 տող.



ԳԷ[Ո]ՐԳ
ՅԱՂԱՒԹՍ [Յ]ԻՇ[ԵՑԷՔ]:

*935. ԽԱՉՔԱՐ*. եկեղեցու ներսում, արևելյան պատուհանի հարավային կողմում, պատի մեջ ագուցված, 2 տող.

ԳԵՈՐԳ
ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇ[ԵՑԷՔ]:

*Ծանոթ*. Այս երկու արձանագրությունները վերաբերում են նույն անձին: Նկատի ունենալով, որ եկեղեցին կառուցվել է *մեծ և բարեպաշտ* Գրիգոր Մամիկոնյանի իշխանության ժամանակ, *ի հալալ արդեանց* Դանիել քահանայի, կարելի է եզրակացնել, որ ԳԵՈՐԳ-ը եկեղեցու շինարար-վարպետն է ու նաև ճարտարապետը:

*936. ԽԱՉՔԱՐ*. ագուցված եկեղեցու խորանում, խաչքարի կողքերին և հիմնամասում, 2 տող.

ԹՎԻՆ :ՈԳ: (1154):
ՅԱՂԱԻԹՍ
ՅՊՎԱ

*Ծանոթ*. Եթե ճիշտ է արտագրված, ուրեմն այլ տեղից է բերված խաչքարը, քանի որ եկեղեցին կառուցվել է ավելի ուշ՝ 1255 թվին:

*937. ԽԱՉՔԱՐ*. Իգատակի եկեղեցուց հարավ-արևմուտք, գետափին, պատվանդանի վրա թեքված, խոշոր և գեղաքանդակ, հողմահարված, քիվին, 2 տող.



ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ Մ͞Բ ՆՇԱՆԻՍ՝ ԶԳՐԻԳՈՐ ՅԻՇ-
ԵՑԷՔ:

*Ծանոթ*. Գրիգորը Դսեղի Մամիկոնյաններից է, եկեղեցու շինարարական արձանագրության մեջ հիշատակված *մեծ եւ բարեպաշտ իշխանը*, որը հանդիպում է բազմաթիվ արձանագրություններում: Եղել է ժամանակի աչքի ընկնող քաղաքական գործիչներից:

*938. ԽԱՉՔԱՐ*. Իգատակի հանգստարանում, խորանի տակ, 2 (թիվը), թիկունքին՝ 13 տող.



[Ի] ԹՒԱԿ[ԱՆԻՆ]
ՈՁԵ (1236)
ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ, ՈՐԴԻ ՄԱ-
ՐԾՊԱՆԱ, ԹՈԴԻ ԶԱ-
ԳԱԴԱԿՈ ԶՈՐՈՅՍ Զ-
ԱԲԳԱՆՆ ԻՄ ՀԱՒՐՆ
ՀՈԳՈՅՆ՝ ԱԶԳԷ ՅԱ-
ԶԳ: ԱՒԱԳԻՆ ԱՐԵՒՈ-
ՎՆ ԱՅՍ ԱՆԽԱՓԱՆ Է:
ՇԱՀՈՒՏՍ ԶԽԱՉՍ ԿԱՆ-
ԳՆԵՑԻ. ԶՄԵԶ ՅԻՇ-
ԵՑԷՔ Վ[ԱՍ]Ն Ք͞Ի, ԱՌԱՋՆ-
ՈՐԴ ՇԱՀՈՒՏՆ ԷՐ
ԱՄԵՆԻ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝
ՆԱ ՆԶՈՎԻ: ԱՄԷՆ:

*Հրատ*. «Լրաբեր», 1975, 9, 97, Շահինյան, ՀՄԿՀ, 55:

*Ծանոթ.* ՁԱԳԱԴԱԿՈ (= Ագադակի) Իգատակ (=այգետակ) գյուղանվան տեղական արտահայտչաձևերից է՝ վկայված նաև Դսեղի Ս. Գրիգոր եկեղեցու արձանագրություններից մեկում:

ԱԲԳԱՆ (պատահում է նաև *աւգան)* Ս. Բարխուդարյանը բացատրում է իբրև ջրի հարկ (տե՛ս «Դիտողություններ և նոր նյութեր հին Հայաստանի ոռոգման գործի վերաբերյալ» հոդվածը, Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության, հ. 1, Եր., 1964, էջ 275-277): Արձանագրությունն ուշագրավ իրավավճիռ է միջնադարյան Հայաստանում հարկային դրվածքի վերաբերյալ: Ըստ այդմ, Գրիգոր Մամիկոնյանը վճիռ է կայացրել՝ ***թողի զԱգադակո ծորոյս զաբգանն իմ հաւրն հոգոյն՝ ազգէ յազգ,*** ասել է իր հայր Մարծպանի հոգու բարեխոսության համար զիջել է Ագադակի ձորից (Իգահատի գետից) Մամիկոնյանների նախարարական տան օգտին գանձվող ջրահարկը, այն էլ՝ սերնդե սերունդ (= ***ազգէ յազգ***), մշտապես: Եվ վճիռն անխախտ է, քանի որ այն կայացվել է սյուզերենի՝ Ավագ Զաքարյանի կամակցությամբ (***Աւագին արեւովն այս անխափան է***): Խաչքարը կանգնեցնող Շահուտը Ագադակ (= Իգատակ) գյուղի ***առաջնորդն է,*** գեղջավագը:

***939. ԽԱՉՔԱՐ***. Մարցից 4 կմ արևելք «Ճգնավորի խաչ» վայրում, քիվին, 1 տող.

Թ:Հ:ՈՁ:ԿԱՆԿՆԵՑԱՒՄՆՇԱՅԻ

⌊Ի⌋Թ⌊ՒԻՆ⌋Հ⌊ԱՅՈՑ⌋:ՈՁ: (1231) ԿԱՆԿՆԵՑԱՒ ՄԲ ՆՇԱ⌈ՆՍ⌉ՅԻ⌈ՇԱՏԱԿ⌉...:

***940. ԽԱՉՔԱՐ***. Նախորդի մոտ, թիկունքին, 19, հյուսիսային կողին, 17 տող.



| | |
|---|---|
| Ի⌊ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ⌋Հ⌊ԱՅՈՑ⌋:ՈՁԹ: (1240), ՅԱՆՈՒՆ | ԱՐ⌈ՈՒ⌉ |
| ԱՅ ԱՅՍ ԻՄ ԳԻՐ Է՝ ԹԱՃ⌊Ե⌋- | ՄՆ . . . |
| ՐԻՍ, ՈՐ ՏՎԻ ԻՄ ԲԱ- | ԱՒՐ Վ- |
| ԺՆԱՅ ԳԵՂԻՍ՝ ԴԵՂԾ | ԵՑԿԷ Կ |
| ՈՒՏԻՍ, ՈՐ ԱՅԼ ԱԲԳԱ- | ՈՌ: ՔՍ |
| Ն ՉԱՌՈՒ, ՈՉ ՈՎ | ԱԾ ՁԹ |
| ԹԷ ԻՄ ՁԱՒԱԿԻ ՏԱ- | |

Ս, ԹԷ ԻՄ ՀՈԳՈՅՍ Տ-
ԱՄ ԱՅՄ՝ ԱՅԼ ԽԱՓԱՆԻ
ՈՉ, ՈՎ, ՈՐ ԽԱՓԱՆԵԼ ՋԱ-
ՆԱՅ՝ Ի ՅԻՄ ՀՈՂՔՆ ՍԵՎ
ԵՐԵՍԱՒՔ ԳԱՅ ՈՒ Ի
Յ:ԺԸ: (318) ՀԱՅՐԱՊԵՏ-
ԱՑՆ ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՑ-
Ի ԵՒ ՄԱՍՆ ՆՈՐԱՅ ԸՆԴ
ՅՈՒԴԱՅԻ ԵՒ ԸՆԴ Խ-
ԱՉԱՀԱՆՈՒԱՑ-
Ն ԵՂԻՑԻ: ԵՒ ՄԵՔ Հ-
ԱՍՏԱՏԵՑԱՔ Ի Տ-

ԱՃԵՐԻ
Ն ՅԱՆՑ-
ԱՆՔՆ
ԹՈՂՈ
Ւ, ՈՐ Ե
ԹՈՂ Ձ-
ՄԵՐ Ա-
ՔԳԱ
ՆԱ: [Ձ]
ԱՄԷ-
Ն:

*Հրատ.* «Լրաբեր», 1975, 9, 98:

*Ծանոթ.* Հրատարակիչը թիվը կարդացել է ՈԺԹ (1170), որը Չ և Ժ գրերի նմանության հետևանք է. *որ տվի իմ բաժնայ գեղիս՝ Դեղձուտիս* հատվածը՝ *որ տվի իմ բաժն այգեդիս Դեղձուտիս:*

Առանձնակի կարևորվում է տեղական բարբառի ներթափանցումը գրավոր խոսքի մեջ: *Այլ խափանի ոչ* կապակցությունը պատվիրան է՝ կայացված վճիռը չխախտելու մասին, խոսակցական լեզվից է նաև *հաստատեցաք ի տարումն* դարձվածը: Ուսանելի է լոռեցու կենսափիլիսոփայական-նախատական խրատանին՝ *ով որ խափանել ջանայ՝ յիմ հողքն սեվերեսաւք գայ,* ասել է վճռախախտ-պարտազանցը իր՝ Թաճերի գերեզմանին սև երեսով, ամոթահար գա:

Հայ վիմագիր հուշարձաններում բազմաթիվ վկայություններ կան *աբգան* ջրահարկի մասին (XIII-XIV դդ.) և *վեցկէ կոռի*՝ հարկադիր պարտույթի վերաբերյալ (X դ.), թեև վերջինը հայ իրականության մեջ կիրառվել է առնվազն VII դարից: Սույն պարտավորագիրը մի բացառիկ ու հազվադեպ տեղեկատու է, ուր կոռն ու աբգանը հանդես են գալիս նույն հրամանագրում, փոխադարձ կապակցության մեջ:

Արձանագրության շարունակությունը թեև մասամբ խճողված է, սակայն որոշակիորեն պարզվում է, որ պաշտոնյա (թե՞ իշխանավոր) Թաճերն իր վճռով *(այս իմ գիր է)* ինքնակամ զիջում է ներկայիս «ճգնավորի թալա» (բացատ) հանդամասի, այն ժամանակ Դեղձուտ (Դեղձուտ) գյուղի ոռոգման՝ իրեն հասանելիք ջրաբաժնի հարկը՝ աբգանը *(այս իմ գիր է՝ Թաճերիս, որ տվի իմ բաժնայ գեղիս՝ Դեղձուտիս, որ այլ աբգան չառու)*:

Ինչ մնում է *վեցկէ կոռի* խնդրին, ապա այն, ինչպես վերևում նշվեց, հանգամանորեն քննարկել է ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը և պարզաբանել, որ *վեցկէ կոռը* գյուղացու կողմից իր արորով, լծասարքով և եզներով կալվածատիրոջ օգտին կատարվող պարտադիր ծրի աշխատանք է (նաև՝ Ս. Ավագյան, ՎԱՔ, էջ 86-88, 309-311):

Տվյալ դեպքում զիջելով աբգանը՝ ի հատուցումն «կրած վնասի» Թաճերի օգտին, վեցկէ կոռի պարտավորություն է դրվում գյուղի վրա, որ դեղձուտցիներն իրենց վեցնաեզն արորով մշակեն նրա հողը: Ցավոք, կոտրված է կոռի թվատառը, սակայն այն չի կարող շաբաթական մեկ օր լինել (ինչպես ընդունված էր), քանի որ վկայված է. *հաստատեցաք ի տարումն ... աւր վեցկէ կոռ:*

*941. ԽԱՉՔԱՐ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ.* ճարտարապետորեն ձևավորված պատվանդանին կանգնած, թիկունքին, 14 տող.



Ի ԹՎԻՍ :ՉԼԴ: (1285):
ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ Ի ՆԵՂ ԵՒ Ի ԴԱ-
ՌՆ ԺԱՄԱՆԱԿԻՍ ԹԱԹԱՐԻ, Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵ[ԱՆ]
ԴԵՄԵՏՐԻ, ՈՐԴՈՅ ԴԱՒԹԻ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵ[ԱՆ] ՏՆ
ՅՈՀԱՆԻՍԻ, ԹՌՈՆ ԴԱՒՓԻՆ: ԵՍ՝ ԹՈՄԱ ՔԱՀԱՆ-
Ա ԵՒ, ԵՂԲԱՅՐ ԻՄ ՏԻՐԱՑՈՒ, ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԱՄԵՆԱՓՐԿ-
ԻՉ ՅԻՇԱՏԱԿ ՀԱՒՐ ՄԵՐՈ ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՒ ԵՒ ՄԱՒՐ ՄԵՐՈ
ՍԻԹԻ, ԵՒ ԲԱՆՈՒՇԱՀԻ ԵՒ ՔՎԵՐԱՑ ՄԵՐՈՑ ՏԻՐԱՆՑԻՆ
ԵՒ ՏԻՐԱՄԱՒՐՆ ԵՒ ՏԻԿՆԱՆՑԻՆ ԵՒ ՓԵՍԱՅ
[ՄԵ]ՐՈՑ ԱՆՊԱՏԵՃԱՌ ՔԱՀԱՆԱՒՑ ԽԱՑՉԱՏՐՈ ԵՒ Մ[ԱՐԳ]-
[Ս]Ի ԵՒ ՄԱՐԳԱՐԻՆ: ՈՎ Ա[Ս]ՏՈՒԱ[Ծ]ԱՅՍԵՐՔ, ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳ[ԷՔ]
[Զ]ՄԵՂՈՒՑԵ[Ա]ԼՔՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ ԵՒ ԱԾ [ՋՋ]-
[ԵՋ] ՅԻՇԷ: ԱՄԷՆ: ՏՐ ԱԾ ՈՂՈՐՄԻ ՏԻՐԱՑՈՒԻՆ ԵՒ
ՏԻՐՈՒՀՈՅ ՆՈՐԱՅ՝ ՆԱՆԱՒԻՆ: ԱՄԷՆ:

***Հրատ.*** Ջալալյանց, Ա, 108, «Ազգ. հանդ.», VII-VIII, 350, ՎՏ, 127, Գ.Հովսեփյան, Հաւուց թառի Ամենափրկիչը, 76:

*Ծանոթ.* Արտասովոր արվեստով ու խաչելության մանրամասների պատկերագրությամբ «Ամենափրկիչ» չորս խաչքարերից վերջինն է, երրորդը Մամիկոնյանների տիրույթներում, Դսեղում վկայված Վահրամի ձեռակերտը: Ճոխ բուսազարդերի հենքին դրվագված տախտակի լայն խաչին գամված է Հիսուսը՝ շրջապատված խաչելությանն առնչվող դրվագներով: Քիվը վայրագաբար ջարդոտված է, ուր, ինչպես Դսեղում, կարող էր լինել համբարձման տեսարանը:

Խաչքարը, ինչպես վկայում է արձանագրությունը, կանգնեցվել է *ի նեղ եւ ի դառն ժամանակիս Թաթարի,* Հաղբատավանքի առաջնորդ, Զաքարյանների քրոջ՝ Դոփի թոռ տեր Յոհանեսի հայրապետության օրերում:

*942.* Նույն, Ամենափրկիչ խաչքարի ցուցանակին ելնդավոր տառերով Պիղատոսի հեգնախոսքերը.



[ՍԱՅ Է ԹԱԳ-]
ԱՒՈՐ ՀՐԷԻՑ:

*943.* Թռչնի և կենդանու մեջքին շրջանակածև լուսատուների մոտ, ելնդատառ, ծուլված զարդերին.

ԱՐ[ԵԳ] Լ[ՈՒՍԻՆ]:

*944.* Խաչափացին, ուռուցիկ Աստծո ձեռքի մոտ.

ԱՉ ՏԼ ԵԱՌ Խ:

*945.* Նախորդի տակ, աղավնակերպին կից, նկնդատառ.

ՅՈԳԻ
ԱՅ:

*946.* Տիրոջ աջը համբուրող Մարիամի լուսապսակին, փորագիր.

ԱԼ ՍՏՈՒԱ ԾԱԾԻՆ:

*947.* Ձախ թևի տակ, սրբապատկերի լուսապսակին, խորագիր, ջարդած.

ՅՈՎԼ ԱՆԷՍԼ:

*948.* Մարիամից ցած, բուսազարդերին ձուլված խոշոր, ուռուցիկ տառերով.

ՏՐ ԱԾ

***Ծանոթ.*** «Տէր Աստուած» երգի բառերը դուրս են թռչում գլուխը դեպի ննջեցյալը թեքած Յովսեփ Արիամաթացու բերանից:

*949.* Ձախ թևի տակ, ներքևում չոքած ֆիգուրի լուսապսակին.

ՆԻԿՈԴԻՄՈՍ:

***Ծանոթ.*** Վերջինս ունելիով քաշում է Տիրոջ ոտքի գամը:

*950.* Խաչակոթունի տակ, Գողգոթայի կենտրոնական կամարի ներքո գլխաքանդակին մերձ.

ԱԴԱՄ:

***Ծանոթ.*** Գրեթե ամենուր նախամարդու պատկերն ուղեկցում է խաչելությանը:

*951. ԽԱՉՔԱՐ.* Ամենափրկիչ խաչելության խաչքարի մոտ. պատվանդանին 3 տող.



ԱԾ ՈՂՈՐՄԻ ԱԼՄԱ-
Յ, ՈՐ ԱՅՍ ԲԱՆԻ-
Ս ԿԱՄԱԿԻՑ ԵՂԵԷ:

***Ծանոթ.*** Կարելի է կռահել, որ խոսքը վերաբերում է «Ամենափրկիչ խաչքարի» պատրաստման գործում Թոմա քահանայից և իր եղբայր Տիրացուից զատ մի այլ մասնակցի: Ցածր, երկարավուն պատվանդանին կանգնած է մակերեսին երկու խաչով կոթողը:

***952. ԽԱՉՔԱՐ.*** Նախորդի մոտ, թևերի արանքներում 3 տող.




Թ[ՈՎ]Մ[ԱՍ],
Մ[ԱՐ]Գ[Ի]Ս Ք[ԱՐԳՈՐԾ]
Ի Թ[ՈՒԻՆ] ՈՂԴ (1245):

***Ծանոթ.*** Քահանաներ լինելու դեպքում հազիվ թե նրանց անունը «ծածկագրվեր» այսպես խնամքով: Ենթադրելի է, որ խաչքարը պատրաստվել է վաղօրոք, վաճառքի համար և վրան գրվել են վարպետների անունները:

***953. ԽԱՉՔԱՐ.*** հայտնի է «Հռնուտի խաչ» անունով.

ՍԿԱՆԿՆԵՑԻԽԱՉՍՅԱՂՈԹՍՅԻՂԵՑԷՔ

. . . Ս ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ: ՅԱՂՈԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

***Ծանոթ.*** Արձանագրության սկիզբն անհետացել է: Պահպանվում է միայն Ս տառը, որը, թերևս, անվան մնացորդ է:

***954. ԽԱՉՔԱՐ.*** Մարցից Իգատակ տանող ճանապարհին, 5 տող.

| | |
|---|---|
| ԿԱՄԱՒՆԱՅԵՍՄԱԼ | ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ՝ ՄԱԼ- |
| ԻՔԱԱՂԱԽ·· ԵԾԻՄԱԲԾՊ | ԻՔԱ, ԱՂԱԽ[Ի]Ն Մ[Ե]ԾԻ ՄԱՐԾՊ- |
| ԱՆԻՆԱՐԱՐԻ ՋՅԻՇԱՏԱԿՋ | ԱՆԻՆ, ԱՐԱՐԻ ՋՅԻՇԱՏԱԿ Ջ_ |
| ԽԱՉՍՈՐՔԵՐԿՐՊԱԳԷՔՅԻ | ԽԱՉՍ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ՝ ՅԻ- |
| ՂԵՑԷՔ | ՇԵՑԷՔ: |

***955. ԽԱՉՔԱՐ.*** Իգատակի հանգստարանում.

ՍԲԽԱՉՍԲԱՐԵԽՈՍԿԱՆԳՆԵՑԻԴԱՒԹԻ

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՈՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԴԱՒԹԻ:

***956. ԽԱՉՔԱՐ.*** գյուղից 1 կմ հյուսիս-արևմուտք, հարավային և հյուսիսային կողերին, 37 կարճ տող.

Ի ԹՎԻՍ Հ[ԱՅՈՑ] :ՈԿ: (1211),
Ի ԹԱԳԱՎՈՐՈՒ-
ԹԵԱՆ ԼԱՇԱՅԻ,
[ԿԱՆԳՆ]ԵՑԻՔ [ՍԲ Խ]Ա[Չ]Ս,
ՈՐՔ ԵՐԿ
ՐՊԱԳԷՔ՝

ԻՐ . . Ի ԵՒ . . . Բ
ՊԱ . . . . . .
ԵՒ ԵՏ ՁԻՁԳՈ
. . . . . . .ՔՆ ՄԱ
ՐՑԱՅՈՑ
ԱՐԱՒՏ-
Ս ՅԱՄԵՆ

ՅԻՇԵՑԵՔ
Ի ՔՍ [ԵՒ ԱԾ
ՁՉԵՁ ՅԻՇ[Ե]: Ե
[Մ] ԿՈՍՏԱ-
ՆԴ[Մ], ՈՐԴ
Ի ԳՐԻԳՈ-
Ր ԱՄԻՐԱ
[ՅԻ], ԹՈՌՆ
ՀԱՄԱԶ-
ԱՍՊԻ . . .
ԱԱ . . . . . .

ԵՒ ՇԻՆԵ-
ՑԻ ՁԱՄԱՐ-
ԻՆՍ ԵԼՈՒ
ԴԻՆ ԻՄ
ՀԱՒՐՆ
ՀՈԳՈՅՆ:
ՈՎ ԽԱՓ-
ԱՆԵ Մ-
ԵՐ ՄԵԴ-
ԱՑՍ ՏՐ [Է]:

ՀՊՎԱ

***Ծանոթ.*** Այս չափազանց ուշագրավ ու հազվադեպ վավերագիրը ճաքճքված է, հողմահարված, անկյունները կոտրտված: Արձանագրությունը թեև չի ամբողջանում, սակայն էապես պարզվում է իմաստը, այն է՝ Համազասպ Մամիկոնյանի թոռ, Գրիգոր ամիրայի (վերակացու, կառավարիչ) որդի Կոստանդը համաձայնության է գալիս մարցեցիների արոտավայրերի ինչ-որ խնդիրների կարգավորման համար (***Մարցայոց արաւտս յամեն***) և կառուցում է կապանքներով բարձունքներ՝ ամառանոցային յայլաղներ, արոտներ սարեր տանող ճանապարհներ (***շինեցի զսարինս ելուղին***), որոնցով ոչ միայն երթևեկություն էր կատարվում, այլ նաև սայլերով, երիվարներով տեղափոխում էին անասնամթերքներ, ձմեռային անասնակերը՝ սարերում հնձված խոտը:

***957. ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ.*** Մարց-Ահնիձոր ճանապարհի գերեզմանոցում, անտառում, 5 տող.



[Ո]ՂՈՐՄՈՒԹ[ԵԱ]ՄԲՆ ԱՅ ԵՍ՝ ՄԱՄԻ-
[Կ]ՈՆՍ, ԹՈՂԻ ՁԳԵՂԻՍ ՋՐԱՀ-
ԱՐԿՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹ[ԵԱՄ]Բ ԹԱՐ-
ԽԱՆԻ: ՀԱՍՏԱՏՈՒՆ ՊԱՀՈՂՔՆ
ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ: ԱՄԷՆ:

***Ծանոթ.*** Այս միջավայրում ջրահարկի զիջման մի քանի վավերագրեր կան, սակայն բոլոր դեպքերում այն վկայված է ***աբգան***, իսկ այս դեպքում՝ ***ջրահարկ:*** Դժվար է կռահել ***Թարխանը*** մարդու անո՞ւն է, թե՞ գյուղապետ-կալվածատիրոջ պաշտոնը. առաջինը լինելու դեպքում պետք է որ մատնանշվեր նրա ով լինելը՝ ինչպես այդ արվել է Իգահատի հանգստարանի 1236 թ. խաչքարի վճռում (***առաջնորդ Շահուտն էր ամենի***):

Արդեն քանիերորդ անգամ հանդիպում է Մամիկոնյանների կողմից իրենց տիրույթներում (հատկապես Մարցի ձորահովտում) աբգանի զիջման իրողությունը: Ինքնին հասկանալի է, որ ամեն դեպքում խոսքը վերաբերում է ինչ-որ սահմաններում, գյուղում ջրահարկի կարգի փոփոխությանը, զիջմանը, հարց, որը արժանի է վերստին հատուկ հետազոտության:

*958. ԽԱՉՔԱՐ*. գեղաքանդակ, ընկած գյուղից 1կմ հյուսիս-արևելք, ծառերի մեջ, թևատակերին 1 տող.

Թ⌊Վ⌋ԻՆ⌋ ՈԿԶ (1217):

*959. ԽԱՉՔԱՐ*. գյուղից հարավ, «Քարի գլուխ» կոչվող գերեզմանոցում, ընկած, քիվին 1 տող.

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ Է ՎՈՒԿ⌈ԻՆ⌉: Ի Թ⌊Վ⌋ԻՆ⌋ ՉՅԱ (1322):

*960. ԽԱՉՔԱՐ*. «Ճգնավոր» սրբատեղիում, գյուղից 4 կմ հարավ-արևելք, երկու մասի բաժանված-ընկած, քիվին 1 տող.

Թ:Հ:ՈՁ: ԿՆԵՑԱՒՄԲՆՋՃՅԻ

⌈Ի⌉ Թ⌊ՎԻՆ⌋ :Յ⌊ԱՅՈՑ⌋: ՈՁ: (1231) Կ⌊Ա⌋Ն⌊ԳՆ⌋ԵՑԱՒ ՍԲ ՆՇԱՆՍ ՅԻ:

***ԾԱՆՈԹ**. Լուսանկարում ՆՇԱՆՍ բառում Շ-ի փոխարեն փորագրված է Չ (խմբ.):*

ՉԿԱԼՈՎ

*961. ԽԱՉՔԱՐ*. գյուղից 3 կմ հյուսիս-արևելք, «Հացուտ» գյուղատեղիի գերեզմանոցում ընկած, խաչակոթունի կողքերին, 1 տող.

Թ⌊Վ⌋ԻՆ⌋ ՌՂ (1641):

ՇԱՄՈՒՏ

*962. ԹԵՎԱՎՈՐ ԽԱՉ («Բեմ»)*. գյուղից 1,5 կմ արևմուտք, գերեզմանոցում, 11 տող.

⌈ԾԱՌԱՅ ՍԲ⌉
ՈՒԽՏԻՆ Յ
ԱՂԲԱՏԱՅ
ԵՍ՝ ԱԲԵՂԱՅ-
ԴԵՂՍ, ՈՐԴԻ
ԱՐՇԱԿՈՒՆ, ԵԿԻ,
ՇԻՆԵՑԻ ՍԲ Խ
ԱՉՍ: ՈՐՔ ԵՐԿ
ՐՊԱԳԷՔ՝ ՅԻՇ
ԵՑԷՔ Ի ՔՍ:
Թ⌊Վ⌋ԻՆ⌋ ՉԿԴ (1315):

***Ծանոթ**. Շարունակության վրա կա ևս 4 տող, որը չի հասկացվել:*

*Նկատառելով ԱԲԵՂԱՅ բառից հետո տողադարձի նշանի առկայությունը, կարծում ենք, որ Ս. Աաղումյանը անձնանունը կարդացել է ԱԲԵՂԱՅԴԵՂ (խմբ.):*